ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 29.05.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-28/13 բողոքը քննող հանձնաժողով

ԳԲԽ-28/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով Անգին Հարությունյանի կողմից 06.05.2013թ. ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-28/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. Անգին Հարությունյանի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով Անգին Հարությունյանը հայտնել է, որ բողոքի առարկան հանդիսանում է «ԿՄԼՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով մրցույթը, որի նպատակն էր «Լեռնանիստ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերումը: Մրցույթին մասնակցելու հայտ էին ներկայացրել երկու անհատ ձեռներեց՝ «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ն, որը հանդիսանում է ԱԱՀ վճարող և «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ն, որը ԱԱՀ վճարող չէ:

Անգին Հարությունյանը նշել է, որ բողոքի փաստային և իրավական հիմք է հանդիսանում այն, որ.

1. Մրցույթին մասնակցող «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ի ներկայացրած գնման ընթացակարգին մասնակցելու դիմումն ու գնի առաջարկը չեն համապատասխանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի պահանջներին՝

ա. Ա/Ձ-ի մրցույթին մասնակցելու դիմումում նշված չեն եղել այն չափաբաժինները, որոնց համար վերջինս ներկայացրել է գնային առաջարկ,

բ. Ա/Ձ-ի ներկայացրած գնային առաջարկի մեջ նշված չի եղել չափաբաժինների քանակը (թե որքան ապրանք է պահանջվում կգ, հատ),

գ. Ա/Ձ-ի ներկայացրած գնային առաջարկի պատճեն հանդիսացող օրինակների էջերը ստորագրված չեն եղել Ա/Ձ-ի կողմից:

2. Հանձնաժողովը Ա/Ձ-ների գնային առաջարկները գնահատելու գործընթացում կոպտորեն խախտել է կառավարության 2011թ. N 168-Ն որոշման 49-րդ կետը: Հանձնաժողովը համեմատելով չափաբաժինների գները, հիմք է ընդունել «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Անգին Հարությունյանը խնդրել է դադարեցնել «ԿՄԼՄ-ՇՀԱՊՁ-11/2» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի որոշումը և հաղթող ճանաչել «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ին՝ գնային առաջարկում նշված չափաբաժինների մասով:

2. «Լեոնանիստ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 08.05.2013թ. N 06/032-691 գրությամբ դիմել է «Լեոնանիստ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 06.05.2013թ. Անգին Հարությունյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Լեոնանիստ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը Կենտրոնում 16.05.2013թ. մուտքագրված գրությամբ Անգին Հարությունյանի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

1. Ա/Ձ Արմիկ Գյուրջյանը ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը.

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու Դիմում «Հավելված 1»,

բ. Գնի առաջարկ «Հավելված 2»,

2. Ա/Ձ Անգին Հարությունյանը ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը.

ա. Գնման ընթացակարգին մասնակցելու Դիմում «Հավելված 5»,

բ. Գնի առաջարկ «Հավելված 5.1»,

Բողոքի վերաբերյալ հանձնաժողովի կարծիքը և կայացրած որոշումները.

1. Ա/Ձ Արմիկ Գյուրջյանի ներկայացրած փաստաթղթերը համապատասխանել են օրինակելի ձևերին՝

ա. Ա/Ձ-ն մրցույթին մասնակցելու դիմումի մեջ չի նշել չափաբաժինները, բայց մասնակցել է մրցույթին բոլոր չափաբաժիններով, որոնց համար նաև ներկայացրել է գնային առաջարկ:

բ. Ա/Ձ-ն ստորագրել է միայն օրինակելի նմուշի բնօրինակի վրա:

2. Հանձնաժողովը հիմք ընդունելով կառավարության 2011թ.-ի 168-Ն որոշման 48-րդ կետի համաձայն որոշում է ընդունել և համեմատելով Ա/Ձ-ների գնային առաջարկները հաղթող է ճանաչել Ա/Ձ Արմիկ Գյուրջյանին:

Պատվիրատուն հայտնել է նաև, որ հանձնաժողովը վերանայել է Ա/Ձ-ների ներկայացրած գնային առաջարկները, Ա/Ձ Անգին Հարությունյանի ներկայացրած գնային առաջարկում ի հայտ են եկել հետևյալ սխալները՝

Ա/Ձ Անգին Հարությունյանի ներկայացրած «Հավելված 5.1» փաստաթուղթը չի համապատասխանում օրինակելի նմուշին, քանի որ 7-րդ սյունյակում նշված չի ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը, այլ ներկայացված է գինն առանց ԱԱՀ-ի: Միևնույն ժամանակ սյունակների համարակալման մեջ կան սխալներ:

3. <u>ԳԲԽ-28/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է Անգին Հարությունյանի կողմից 06.05.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝ դադարեցնել «Լեռնանիստ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿՄԼՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2013թ. կայացած նիստի N 2 արձանագրությամբ «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստաթղթերն անվավեր ճանաչելու և «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ին «ԿՄԼՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի NN NN 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 24, 33, 34, 35, 36 չափաբաժինների մասով միանձնյա հաղթող ճանաչելու որոշումը:

4. <u>ԳԲԽ-28/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-28/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.</u>

Հանձնաժողովն ուսումնասիրել է Անգին Հարությունյանի 06.05.2013թ. ներկայացրած բողոքը, «ԿՄԼՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային

համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետև՝ նաև Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 29.04.2013թ. ժամը 14:00-ի և 02.05.2013թ. կայացած նիստերի համապատասխանաբար NN 1 և 2 արձանագրությունները, Ընթացակարգին մասնակցելու նպատակով «Անգին Հարությունյան» և «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ների կողմից ներկայացված հայտերը, Կենտրոնում 16.05.2013թ. մուտքագրված «Լեռնանիստ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) գրությունը և դրան կից փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

Անգին Հարությունյանը ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Լեռնանիստ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿՄԼՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու հայտ են ներկայացրել՝ «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ն և «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ն:

1. Բողոքաբերը նշել է, որ բողոքի փաստային և իրավական հիմք է հանդիսանում այն, որ.

1. Ընթացակարգին մասնակցող «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ի ներկայացրած գնման ընթացակարգին մասնակցելու դիմումն ու գնի առաջարկը չեն համապատասխանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31 հոդվածի պահանջներին՝

ա. Ա/Ձ-ի Ընթացակարգին մասնակցելու դիմումում նշված չեն եղել այն չափաբաժինները, որոնց համար վերջինս ներկայացրել է գնային առաջարկ,

բ. Ա/Ձ-ի ներկայացրած գնային առաջարկի մեջ նշված չի եղել չափաբաժինների քանակը (թե որքան ապրանք է պահանջվում կգ, հատ),

գ. Ա/Ձ-ի ներկայացրած գնային առաջարկի պատճեն հանդիսացող օրինակների էջերը ստորագրված չեն եղել Ա/Ձ-ի կողմից:

Պատվիրատուն վերոգրյալի վերաբերյալ հայտնել է, որ «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված գնման ընթացակարգին մասնակցելու դիմումում նշված չեն եղել չափաբաժինները, սակայն մասնակիցը գնային առաջարկ է ներկայացրել բոլոր չափաբաժինների համար, ստորագրել է միայն օրինակելի նմուշի բնօրինակի վրա:

1-ին կետի վերաբերյալ.

«Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է գնման ընթացակարգին մասնակցելու դիմում և գնային առաջարկ, որոնք ստորագրված

են վերջինիս կողմից: Ներկայացված դիմումում չեն նշվել Ընթացակարգի չափաբաժինների համարները, սակայն գնային առաջարկի «Չափաբաժինների համարները» սյունակում նշված են Ընթացակարգի չափաբաժինների համարները:

ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) 110-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով փաստաթղթային ձևով գնում կատարելու դեպքում կիրառվում են հետևյալ պայմանները՝

1) հայտը ներառում է շրջանակային համաձայնագիր կնքած անձի կողմից հաստատված գնման ընթացակարգի դիմումը և գնային առաջարկը:

Հրավերի 6.2 կետի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներառում է շրջանակային համաձայնագիր կնքած անձի կողմից հաստատված՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N 5) և գնային առաջարկը (Հավելված N 5.1):

Այսինքն, թեև «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու դիմումում նշված չեն Ընթացակարգի չափաբաժինների համարները, սակայն Ընթացակարգի չափաբաժինների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ի գնի առաջարկում, հետևաբար գտնում ենք, որ «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ի կողմից պահպանվել են Կարգի 110-րդ կետի 1-ին ենթակետով և Հրավերի 6.2 կետով սահմանված պահանջները:

Ինչ վերաբերում է «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ի ներկայացրած գնային առաջարկում չափաբաժինների քանակը (թե որքան ապրանք է պահանջվում կգ, հատ) չնշելուն, ապա Հրավերով սահմանված գնի առաջարկի ձևում նման պահանջ սահմանված չէ:

Բողոքաբերը նշել է, որ բողոքի փաստային և իրավական հիմք է հանդիսանում նաև այն, որ «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ի կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված գնային առաջարկի պատճեն հանդիսացող օրինակների էջերը ստորագրված չեն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաթղթային ձևով հայտը ներկայացվելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և հրավերում նշված թվով պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն» բառերը: Ծրարը և

հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը:

Հրավերի 2-րդ մասի՝ «Հայտերը պատրաստելու» հրահանգի 4.1 կետի համաձայն՝ ծրարը և հրավերով նախատեսված՝ Մասնակցի կազմած փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը:

Գտնում ենք, որ «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ի կողմից պահպանվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով և Հրավերի 2-րդ մասի՝ «Հայտերը պատրաստելու» հրահանգի 4.1 կետով սահմանված պահանջները, քանի որ նույն հոդվածով և կետով հստակ սահմանված է, որ մասնակիցը պետք է ստորագրի հրավերով նախատեսված իր կողմից ներկայացվող փաստաթղթերը, այլ ոչ թե ներկայացվող բնօրինակ և պատճեն հանդիսացող փաստաթղթերի յուրաքանչյուր էջը:

Այսպիսով, գտնում ենք, որ այս հիմքերով բողոքը հիմնավոր չէ:

2. Բողոքաբերը նշել է, որ բողոքի փաստային և իրավական հիմք է հանդիսանում այն, որ Հանձնաժողովը Ա/Ձ-ների գնային առաջարկները գնահատելու գործընթացում կոպտորեն խախտել է կառավարության 2011թ. N 168-Ն որոշման 49-րդ կետը: Հանձնաժողովը համեմատելով չափաբաժինների գները, հիմք է ընդունել «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Անգին Հարությունյանը հայտնել է նաև, որ «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ի ներկայացրած գնային առաջարկի մեջ նշված չի եղել չափաբաժինների քանակը (թե որքան ապրանք է պահանջվում կգ, հատ), ինչպես նաև Պատվիրատուն գնային առաջարկները գնահատել և չափաբաժինների գները համեմատել է հիմք ընդունելով «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի ներկայացրած գները ներառյալ ԱԱՀ-ն:

Պատվիրատուն վերոգրյալի վերաբերյալ հայտնել է, որ հանձնաժողովը վերանայել է մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, ինչի արդյունքում «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի ներկայացրած գնային առաջարկում ի հայտ են եկել հետևյալ սխալները՝ «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի ներկայացրած «Հավելված 5.1» փաստաթուղթը չի համապատասխանել օրինակելի նմուշին, քանի որ 7-րդ սյունյակում նշված չի եղել ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը, այլ ներկայացված է եղել գինն առանց ԱԱՀ-ի, միևնույն ժամանակ սյունյակների համարակալման մեջ եղել են սխալներ, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը համեմատելով մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները, Կարգի 48-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացրել որպես ընտրված մասնակից հայտարարել «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ- ին, իսկ

«Անգին Հարություն» Ա/Ձ-ի հայտը մերժել՝ գնային առաջարկը սխալ ներկայացնելու պատճառաբանությամբ:

2-րդ կետի վերաբերյալ.

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 29.04.2013թ. ժամը 14:00-ին կայացած նիստի N 1 արձանագրությամբ որոշում է կայացրել Ընթացակարգի 1-16, 21, 23, 25-40 չափաբաժինների մասով հաղթող ճանաչել «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ին, իսկ 17-20, 22, 24 չափաբաժինների մասով՝ «Անգին Հարություն» Ա/Ձ-ին:

Սակայն, Հանձնաժողովը 02.05.2013թ. կայացած նիստի N 2 արձանագրությամբ որոշում է կայացրել անվավեր ճանաչել «Անգին Հարություն» Ա/Ձ-ի ներկայացրած փաստաթղթերը և միանձնյա հաղթող ճանաչել «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ին:

Հանձնաժողովը նշված որոշման հիմքում դրել է այն հանգամանքը, որ «Անգին Հարություն» Ա/Ձ-ի ներկայացրած գնային առաջարկում ի հայտ են եկել հետևյալ սխալները՝ «Անգին Հարություն» Ա/Ձ-ի ներկայացրած «Հավելված 5.1» փաստաթուղթը չի համապատասխանել օրինակելի նմուշին, քանի որ 7-րդ սյունյակում նշված չի եղել ՀՀ պետական բյուջե վճարվելիք ԱԱՀ-ի գումարը, այլ ներկայացված է եղել գինն առանց ԱԱՀ-ի, միևնույն ժամանակ սյունյակների համարակալման մեջ եղել են սխալներ:

Բողոքաբերի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկի աղյուսակը բաղկացած է թվով ինը սյունակներից: Նույն աղյուսակի վերջնամասում նշված ծանոթության համաձայն, եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 7-րդ սյունյակում:

Բողոքաբերի կողմից ներկայացված գնի առաջարկի աղյուսակի 1-ին սյունակում նշվել են չափաբաժինների համարները, 2-րդ սյունակում՝ գնման առարկայի անվանումը, 3-րդ սյունակում՝ չափման միավորը, 4-րդ սյունակում՝ քանակը, 5-րդ սյունակում՝ ինքնարժեքը, 6-րդ սյունակում՝ շահույթը, 7-րդ սյունակում՝ առաջարկվող գինն առանց ԱԱՀ-ի, 8-րդ սյունակում՝ ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը և 9-րդ սյունակում՝ տառերով և թվերով առաջարկված գինը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ մասնակցի գնային առաջարկը, որը ներառում է նաև ինքնարժեքի հաշվարկը, ներկայացվում է ինքնարժեք (վաճառքի ինքնարժեք), շահույթ և անուղղակի հարկեր ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Այսինքն, բողոքաբերի կողմից ներկայացված գնային առաջարկում՝ մասնավորապես 5-ից 8-րդ սյունակներում, նշված են Կարգի 48-րդ կետով պահանջվող գնային առաջարկի հաշվարկի ձևը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի այն պատճառաբանությանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի հայտը մերժել է ԱԱՀ-ի գումարի չափը հատկապես 7-րդ սյունյակում չնշելու և սյունյակները սխալ համարակալելու պատճառով, անհիմն է, քանի որ թեև աղյուսակի սյունակների համարակալումը սխալ է կատարվել, սակայն գնային առաջարկը պարունակում է Կարգով և Հրավերով սահմանված՝ գնի առաջարկին վերաբերող ողջ տեղեկատվությունը, որը պարզապես նշվել է գնային առաջարկի այլ սյունակներում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Հետևաբար գտնում ենք, որ Հանձնաժողովը «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի հայտը մերժելով խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջները:

Կարգի 49-րդ կետի համաձայն՝ եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 110-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Հրավերի 1-ին մասի 7.2 կետի համաձայն՝ հաղթողը՝ ընտրված մասնակիցը, որոշվում է հրավերին (ծանուցմանը) համապատասխանող հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին

նախապատվություն տալու սկզբունքով, ընդ որում գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց ԱԱՀ-ի գումարի հաշվարկման:

Համեմատելով «Անգին Հարությունյան» և «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ների կողմից Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված գնային առաջարկները պարզվեց, որ Ընթացակարգի NN 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 24, 33, 34, 35, 36 չափաբաժինների համար ներկայացրած նվազագույն գնային առաջարկը «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի առաջարկն է, հետևաբար Ընթացակարգի տվյալ չափաբաժիններով Կարգի 49-րդ կետի, 110-րդ կետի 4-րդ ենթակետի և Հրավերի 1-ին մասի 7.2 կետի համաձայն՝ հաղթող՝ ընտրված մասնակից, պետք է ճանաչվի «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ն:

Այսպիսով, գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ պատվիրատուի կողմից խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով, Կարգի 48-րդ և 49-րդ կետերով, 110-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 1-ին մասի 7.2 կետով սահմանված պահանջները:

Վերոգրյալի հիման վրա և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետը՝ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Անգին Հարությունյանի կողմից 06.05.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել մասնակի:

2. Դադարեցնել «Լեռնանիստ համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կողմից սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԿՄԼՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2013թ. կայացած նիստի N 2 արձանագրությամբ «Անգին Հարությունյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստաթղթերն անվավեր ճանաչելու և «Արմիկ Գյուրջյան» Ա/Ձ-ին «ԿՄԼՄ-ՇՀԱՊՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի NN NN 1, 2, 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, 17, 18, 19, 20, 21, 22, 24, 33, 34, 35, 36 չափաբաժինների մասով միանձնյա հաղթող ճանաչելու որոշումը:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Գայանե Գասպարյան

Անդամներ՝ Մարատ Մանուչարյան

Ռուբեն Խլոյան